

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ռուս-եապոնական թաղութան ներկայ դուքսը:—Մակեդոնիայի բե-
ֆոմների առաջին թայերը:—Ժողովական ճառը եւ Սափարովի ու
Յոնյեվի կարծիքները ապագայի մասին:—Նորեղեան երրորդ մրցանակաբաշ-
խութիւն:—Վասարիա Դարագաշեան եւ Վ. Մանուկ Գալունի:

Օրէջօր մօայլ ու չարագուշակ են դառնում Հեռաւոր Ա-
րեւելքից հասնող լուրերը: Ռուսաստանի պատասխանը չը գո-
հացրեց եապոնիային: Նոյեմբերի վերջում բացուեց եապոնա-
կան պարլամենտը: Լսելով իրանց սիրելի Միկադօի գահա-
կան ճառը եապոնական ազգի ներկայացուցիչները իրանց պա-
տասխանի մէջ միաձայն ընդունեցին մի բանաձև, որ պախա-
րակում էր կառավարութեան անվճռողականութիւնը Ռուսաս-
տանի նկատմամբ: «Եապոնական կայսրութիւնը, ասուած է
պարլամենտի այդ պատասխանի մէջ, գտնւում է իր փառքի
զազաթնակէտում: Նրա ներկայ դրութիւնը չ'ունի հաւասարը
վերջին հազարամեակի պատմութեան մէջ: Ստորին պալատի
անդամները խորապէս ափսոսում են, որ այդպիսի կրիտիկա-
կան ըուպէում, երբ ազգի բախտը վտանգի է ենթարկուած,
կառավարութեան ձեռք առած միջոցները այնքան քիչ են հա-
մապատասխանում դրութեան պահանջներին և անկարող են
ծառայել ազգային ազդեցութեան բարձրանալուն: Կարինետի
քաղաքականութիւնը համաձայն չէ կայսրութեան առաջադի-
մութեան, որովհետև այդ քաղաքականութիւնը ղեկավարում է
միայն ներքին խորհրդածութիւններով և լի է տատանումնե-
րով: Մինիստրութեան դիպլոմատիան սխալ է, և մենք ամե-
նահպատակօրէն խնդրում ենք ձերդ բարձրութեան՝ քննութեան
ենթարկել դրութիւնը: Ներկայ պատասխանը թելադրուած է

կայսրութեան բարօրութեան հոգսից և հանդիսանում է իբրև ազգային բաղձանքների արտայայտութիւն»:

Միկադոն, ինչպէս յայտնի է հեռագրներէրց, պատասխանեց պարլամենտի արձակումով: Դրանից հետոյ՝ Ռուսաստանի պատասխանը քննելու համար Տոկիոյում (դեկտ. 4-ին) գումարուեց Եապոնիայի աւագագոյն պետական գործիչների խորհուրդը: Ռուսաստանի պատասխանը չէր գոհացնում դրանց: Դեկտեմբերի 8-ին Եապոնիայի արտաքին գործոց մինիստր բարոն Կոմորան յանձնեց ռուսաց դեսպան բարոն Բոգեւին եւ պոնական նոտան: Անգլիական թերթերի ասելով այդ նոտան ունի մօտաւորապէս հետեւեալ բովանդակութիւնը. Կորէայի նըկատմամբ Եապոնիան չի կարող թոյլ տալ, որ այդ թերակըզին կամ նրա մի մասը ընկնի մի այլ պետութեան, մանաւանդ Ռուսաստանի ձեռքը. նոյնը չի կարող թոյլ տալ թէ Եապոնիայի ապահովութեան և թէ այլ քաղաքական նկատումներով, ինչպէս և եապոնական առևտրի և արդիւնագործութեան շահերի գերակշռութեան տեսակէտով: Գալով Մանջուրիային Եապոնիան անկարող է համբերել որ Ռուսաստանը մշտապէս զբաւի այդ երկիրը, և վտանգի մշտական սպառնալիք դառնայ Եապոնիայի ամենակենսական և օրինական շահերին Կորէայում: Եապոնիան Մանջուրիայում ունի դաշնագրներով հաստատուած իրաւունքներ և շահեր, որ պէտք է պաշտպանի: Բացի այդ, անհրաժեշտ է ինկատի ունենալ և Մանջուրիայի աշխարհագրական դիրքը՝ Պեկինի ծոցի, Պեկինի ու Տիենցզինի նկատմէ՝ իս. պէտք է պահպանել բաց դռների և իրաւունքների հաստատութեան սկզբունքը, որ խախտուած կը լինի եթէ Ռուսաստանը զբաւի Մանջուրիան: Եապոնիան աւելի քան մի այլ պետութիւն ստիպուած է պահպանել Չինաստանի անկախութիւնը: Եապոնիայի վարկը կ'ընկնի չինացիների աչքում, եթէ նա հնարաւորութիւն տայ Ռուսաստանին՝ խախտել իր հանդիսաւոր խոստումը և բազմիցս արած հաւաստիացումները՝ Մանջուրիան որոշ պայմանաժամին թողնելու մասին:

Եւրոպական մի քանի թերթերի ասելով Պարիզի և Լոնդոնի կաթինետները իրանց կողմից աշխատում են ռուս-եապոնական դիպլոմատիայի բանակցութիւնների վրայ ազդել խաղաղարարական ուղղութեամբ: Եապոնիայի վերջին նոտայի պատասխանը սպասուում է յունուարի սկզբում:

Մինչ այս մինչ այն երկու հակառակորդները լարում են իրանց ամբողջ ոյժը և արագ պատրաստուում պատերազմի համար: Հեռաւոր-Արեւելքի ջրերն են ուղարկուում և անգլիական զրահաւորներ: Հէնց դեկտ. 19-ին ճանապարհ ընկաւ Սաղաղ

Ուկրաինոսը անգլիական «Կինգ Ալֆրեդ» մեծ և նոր զբաժակեր յածանաւը:

Մերձաւոր Արեւելքում Թիւրքիան ակամայ սկսում է համակերպուել մեծ պետութիւնների լիազօրութեամբ գործող աւստրո-ռուսական զիպլոմատիայի ցուցումներին: Մակեդոնիայի ընդհանուր տեսուչ Խիլմի փաշային մօտ պէտք է լինեն այդ պետութիւնների երկու քաղաքացիական գործակալները: Աւստրո-Ունգարիան առաջարկել է Հէնրիխ Միլլեր Ֆոն-Րազօին, որ ծագումով մաջար է, եղել է հիւպատոս Բէյրութում, Գահիրէում, Բոսնիայում և Օդեսայում: Ռուս քաղաքացիական ազնետ նշանակուած է Դեմերիկ, որ հիւպատոս է եղել Նիշում, Կանդիայում, Եաֆֆայում և Բէյրութում: Երկուսն էլ լաւ գիտեն թէ Թիւրքերէն և թէ սլաւոներէն: Բացի այդ, մակեդոնական ժանդարմերիայի հրամանատարը պէտք է լինի իտալացի գեներալ, որ կ'ունենայ երեք զնդապետ օգնականներ, մի-մի նշանակուած Ռուսաստանի, Աւստրո-Ունգարիայի և Անգլիայի կողմից:

Աւստրո-Ունգարիայի արտաքին գործոց մինիստր Գոլուխովսկին, ինչպէս երեաց նրա ճառից, բաւական զօհ է հասած արդիւնքներից և ապագայում ծագելիք բարբութիւնների մեղը հէնց այժմուանից գցում է Բուլղարիայի վրայ: Այդ կառավարութեան ցոյց տուած աջակցութիւնը մակեդոնական յեղափոխականներին նա «ուղղակի յանցաւոր (sträflig) և ակախ միջամտութիւնից սակաւ տարբերուող» գործ անուանեց:

Բուլղար կառավարութիւնից դժգոհ են և Ռուսաստանում: Պէտք է նկատել որ պարլամենտական վերջին ընտրութիւնները Բուլղարիայում վերջացան ստամբուլովեան կուսակցութեան յաղթանակով. այժմեան մինիստրութեան (Պետրով-Պետկով) կողմընակից են 143 պատգամաւորներ, մինչդեռ ընդդիմադիր կամ ռուսասէր կուսակցութիւնը (պարագլուխ Դանել) 46 հոգուց է բաղկացած: Դադանիք չէ որ ստամբուլովեան կուսակցութեան համակրանքը մակեդոնական յեղափոխականների կողմն է: Երկու պարագլուխներ՝ Սարաֆով և Յոնչեվ՝ այն կարծիքի են որ այս գարնան կը վերսկսուի յեղափոխական շարժումը Մակեդոնիայում, որ այժմ դադարել է ցրտերի պատճառով: Այդ գործիչների իդէալն է Մակեդոնիայի լիակատար ինքնավարութիւնը, մանաւանդ որ այդ համապատասխանում է Բերլինի դաշնագրութեան 26 յօդ.-ին: Սարաֆով և Յոնչեվ այժմ պատում են գլխաւոր եւրոպական կենտրոնները՝ հասարակական կարծիքը իրանց դատի օգտին գրաւելու նպատակով: Լրագրներից յայտնի է որ մակեդոնական կոմիտեաները այժմ հաւաքում են զէն-

քի մեծ պաշար և դրամ: Արդէն առատ նուիրատուութիւններ են ստացուում Վիեննայից, Պարիզից, Լոնդոնից, Հոտինց, Յըլդրենցիայից, Չիկագօից, Ֆրանսիսկօից, Մարսելից և Մոսկուայից: Մակեդոնական շարժման պարագլուխները լաւատես են ապագայի նկատմամբ և հաւատացած են որ մակեդոնացիները յաղթանակ կը տանեն...

Տեղի և ժամանակի սղութիւնը թոյլ չեն տալիս աւելի կանգ առնել քաղաքական կեանքի վրայ, ուստի մեր տրամադրութեան տակ մնացած տողերում գէթ թուցիկ կերպով արձանագրենք մի քանի երևոյթներ ևս գիտական աշխարհից:

Կայացաւ Նորեկեան երրորդ մրցանակաբաշխութիւնը: Քիմիական մրցանակը բաժանեցին իրար մէջ մեր ընթերցողներին ծանօթ Կիւրի ամուսինները և Անրի Բեկկերէլ *), երեքն էլ հռչակուած բաղիյ. նոր տարրի և ճառագայթագործոն երևոյթների հետազոտութիւններով: Մրցանակը ֆիզիկայից առացաւ Ստոկհոլմի պրոֆեսոր Սուանտէ Արրենիւսը. բժշկական մրցանակը տրուեց պրոֆ. Նիլս Ֆինդենին՝ հռչակաւոր դանեմարքցի բժշկին, որ հնարել է լուսաբոլժութիւնը: Գրական մրցանակին արժանացաւ հռչակաւոր Բիւքնստիերն-Բիւքնսոն. խաղաղութեան մրցանակը տուին անգլիացի Չարլզ Կրեմերին — միջազգային միջնորդ դատարանի այդ անխոնջ ջատագովին ու բարոյչին, որ 30 տարի է միջազգային միութեան քարտուղարն է:

Անշուշտ աւելի համեստ հաժաւ ունէին աշխարհում այն երկու հայ գիտնականները, որոնք նոյեմբեր ամսում վախճանուեցան Պոլսում. Մխիթարեանների պանթէոնում աւելացան երկու նոր շերտեր, դրանցից մէկը Մատթիա Գարագաշեանինն է, որ յայտնի է հայոց պատմութեամբ հետաքրքրող իրաքանչիւր անհատի իր նշանաւոր «Քննական պատմութիւն հայոց» գրքով, իսկ միւսի տակ հանգչում է Մանուէլ Քաջունին՝ «Բառագիւրդ արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեան» երկհատոր պատկառելի աշխատութեան հեղինակը:

Այլ անգամ կը տանք այդ նշանաւոր գործիչների աւելի մանրամասն կենսագրութիւնը:

Լ. Ս.

*) Տես «Մուրճ» № 4 և 7 «Գիտութեան աշխարհից»: